

ԻՐԱՆԱՀԱՅ ԲԵՄԱՐՈՒԵՍԸ
Ի. ԴԱՐԻ 50-70ԱԿԱՆՆԵՐԻՆ՝
ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԽՈՐՔՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ՉԹԵԱՆ

Ի. դարի 40-50ականներին, երբ բեմարուեստում կատարուող հիմնարար փոփոխությունները որոշում էին նաև համաշխարհային թատերական շարժման ընթացքը, ակնյայտ դարձաւ, որ սփիւռքահայ թատրոնը նույնպէս, հնարաւոր ճգնաժամից խուսափելու համար, պէտք է սկզբունքորէն վերանայէր իր զարգացման յետագայ ուղիները:

Իրանահայ թատրոնն իր սկզբնաւորման իսկ շրջանից ընթանալով արեւելահայ իրապաշտական թատրոնի ճանապարհով, արդէն իսկ ունէր բաւարար հիմքեր՝ բեմարուեստի ընդհանուր շարժմանը հետեւելու համար:

Ի. դարի 30-40ականներին, երբ Թեհրանի թատերական կեանքի «մտայլ հորիզոնի վրայ»¹ հիմնականում երեւում էին հայ իրականությունից հեռու՝ «օտարի բարքերը, օտարի գաղափարներն ու ձգտումները, օտարի բարոյական ըմբռնումները»² արտայայտող գործեր, թատրոնի վերափոխումն առաւել եւս դարձաւ անհրաժեշտություն:

1949ին, մի խումբ արուեստագէտներ, թաւրիզահայ անուանի թատերական գործիչ Մուշեղ Յովհաննիսեանի (1902-1957) ղլխաւորութեամբ, ստեղծեցին ԹԵԱԹԸ՝ «Թեհրանահայ Երիտասարդ Արուեստասիրաց Թատերախումբ»ը, որը առաջդրած խնդիրների իր տեսակով, դարձաւ թատրոնի նորագոյն պահանջների իրականացնողն իրանահայ համայնքում: Կար բեմադրիչի եւ նրա կարեւորութեան յստակ դիտակցում, որն անցեալ դարասկզբին որոշակիորէն իր արտացոլումը գտաւ ինչպէս Թաւրիզում, այնպէս էլ Թեհրանում՝ Մկրտիչ Թաշճեանի, Եփրատ Բարոյեանի (1902-1975), Մանուէլ Մարութեանի, Մ. Յովհաննիսեանի եւ այլ բեմադրիչների բեմադրություններում: Դերասանն այս պարագայում բեմադրիչին հակադրուելու փոխարէն, պէտք է գտնէր նրա հետ համագործակցելու ուղիներ, իր կերպարն ստեղծելով միւսներին համահունչ՝ ելնէր բեմադրութեան բեմադրիչական ընկալումից: Այստեղից՝ ստեղծագործական յարաբերությունների նոր որակ թատերախմբում, երբ, պոլսահայ բեմից եկող միայնակ ողբերգակների եւ դերասանական անհատականությունների թատրոնը փոխարինում էր խմբայինով:

Լիդա Աթախանը, Էմիլիա Շուլցը, Արամայիս Յովսէփեանը (Արման), Մուրէն Բաղդասարեանը (Ք. Արմէն), ԹԵԱԹում ձեւաւորուեցին իբրեւ նոր ժամանակների դերասաններ՝ Գրիգոր Ղարաբէկեանի, Մուրէն Խաչիկեանի, Վանուհի Աւետիսեանի, Սիրամարգ Ատովմեանի, Ռուբինա Աթախանի եւ ուրիշների կողքին:

Թատերախումբն ունէր իր ծրագիր-կանոնադրությունը՝ նախատեսելով «ներկայացնել հայկական եւ օտար պիեսներ, օրուայ ընդունուած չափանիշով»³: Ելնելով այս հիմնադրոյթից, խմբի ղեկավար Մուշեղ Յովհաննիսեանը, գործնականից բացի, կազմակերպեց նաև տեսական պարապմունքներ՝

«Զրոյցներ Թատերական Արուեստի Մասին» թեմայով, որոնք նոյնպէս կոչուած էին Հիմնաւորելու բեմադրիչի աճող գերը ժամանակակից թատրոնում⁴։

Պատահական չէ, որ նման ծրագիր ունեցող եւ գործնականում այդ ծրագիրն իրականացնող խմբի վարչութեան շուրջը (պատուոյ նախագահ՝ Նորայր Մամեան), դերասաններից բացի, Համախմբուեցին նաեւ Համայնքի ոչ միայն երիտասարդ, այլեւ աւագ սերունդների բեմադրիչական ուժերը։

Նրանցից էր Բարոյեանը՝ ուսւ բեմարուեստի դպրոցն անցած, Մոսկուայի նշանաւոր թատերական գործիչներ Ռուբին Միմոնովի եւ Սուրէն Պաշատրեանի հետ ստեղծագործական շփումներ ունեցած մի անձ, որի շնորհիւ, Թաշահանից յետոյ, ամրապնդուեցին իրապաշտ թատրոնի Հիմքերը Թաւրիզում⁵։

Երիտասարդ բեմադրիչներն, իրենց հերթին, Համայնքում արդէն ճանաչում գտած արուեստագէտներ էին։

Սամուէլ Պաշիկեանը (1924–2001)՝ Այլթ օրաթերթի աշխատակիցը, խոստմնալից հեղինակի յայտ ներկայացնելուց բացի (հեղինակել է «Սառա» եւ «Գորշ Վարագոյրներ» թատերախաղերը), Փասաղինայի ամերիկա-իտալական Թատերա-Շարժանկարային ինստիտուտի բեմադրական դասընթացների հեռակայ ուսանող էր՝ գրեթէ միաժամանակ դառնալով նաեւ Թեհրանի «Իրանա Տիլմ» ստուդիայի մնայուն բեմադրիչը⁶։

Արամայիս Աղամալեանը (1910–1985) եւ Վահան Աղամալեանը (1889–1976), թատրոնում աշխատելուց բացի, նաեւ փայլուն կրթութիւն ստացած արհեստավարժ նկարիչներ էին։

Ա. Աղամալեանը, 1924–1927ին սովորել է Երեւանի Գեղարուեստա-Տեխնիկական Դպրոցում՝ իրրեւ արուեստագէտ ձեւաւորուելով Մարտիրոս Սարեանի, Գաբրիէլ Գիւրջեանի, Վահրամ Գայֆէճեանի, Սեդրակ Առաքելեանի, Վրթամէն Ախիկեանի հովանու ներքոյ։ Երեւանի, Լենինականի (այժմ Գիւմրի) եւ Թիֆլիսի թատրոններում աշխատելուց յետոյ, 1930ից ուսումը շարունակել է Գերմանիայում, աւարտել Բեռլինի Արուեստի Թատերագիտական Դպրոցը⁷։

Վ. Աղամալեանն իր բարձրագոյն կրթութիւնն ստացել է Մոսկուայում եւ Պետերբուրգում։ Նա յայտնի էր իրրեւ «իլյանայի գծանկար դիմանկարների»⁸ վարպետ։ 1921ին գալով Թաւրիզ՝ նա աշխատել է անուանի բեմադրիչ եւ դերասան Թաշահանի հետ, մասնակցել Վահրամ Փափազեանի իրանեան հիւրախաղերին (1934), եղել Մարութեանի, Միքայէլ եւ Մարգո Կոստանեանների, Քրիստափոր եւ Ժենիա Մանարների խաղընկերը⁹։

Ռուբին Աթայեանը, իրրեւ դերասան եւ բեմադրիչ, իր ստեղծագործական ուղին սկսել է Նոր Զուլայում՝ 1931–1935ին։ Թեւթում ստանձնելով «Մանկագատանեկան» խմբի պատասխանատու վարիչի պարտականութիւնները՝ նա իրականում սկիզբ դրեց պատանի Հանդիսատեսի թատրոնի գործունէութեանը թատերախմբի իսկ ներսում, նոյնպիսի արդիւնաւէտութեամբ մասնակցելով նաեւ խմբի միւս նախաձեռնութիւններին¹⁰։

Այսպիսով, անցեալ դարի կէսերին, Թեհրանում ուրուագծուեց նոր, ժամանակակից թատրոնի նկարագիրը, որտեղ Հիմնական դէմքը, բեմադրիչից բացի, դառնում էր նաեւ բեմանկարիչը։

Ա. եւ Վ. Աղամալեանները, լինելով նկարիչներ, բեմադրականից բացի, միանձնեայ էին լուծում նաեւ ներկայացումների արտաքին կողմին առնչուող

բոլոր խնդիրները՝ շրջանցելով, այսպիսով, բեմադրիչ-բեմանկարիչ համատեղ աշխատանքի բարդ ու պատասխանատու փուլը:

Մնացած դէպքերում, երկու տարբեր արուեստագէտների համատեղ աշխատանքը ԹԵԱԹում վերահեց ստեղծագործական լիարժէք համագործակցութեան, երբ, բեմանկարիչը, Մոսկուայի Գեղարուեստական Թատրոնին (ՄԳԹ) նման, բեմադրիչի կողքին դառնում էր ներկայացման համահեղինակը:

Շարունակելով համեմատութիւնը, ՄԳԹն ընդունելով իրրեւ ձեւորինակ (մոդէլ), կարելի է ասել, որ ի դէմս սեփական հեղինակի՝ Պաշիկեանի, խաղացանկի հարցը թատերախմբում նոյնպէս լուծուեց մոսկովեան թատրոնի սկզբունքով: Պաշիկեանի երկու՝ «Սառա» և «Գորշ Վարագոյրներ» դրամաները, չեխովեան «Ճաշ»ին և միւս գործերի պէս, ԹԵԱԹի ստեղծագործական նկարագիրը որոշելուց բացի, հիմք հանդիսացան նաև դասական երկերը նորովի մեկնաբանելու համար:

Շարժանկարում միջազգային ճանաչում դտած, «Իրանի Ալֆրէդ Հիլքոքը» համարուած Պաշիկեանը, իր գործունէութիւնն, այսպիսով, սկսելով ԹԵԱԹում, նոյնպիսի կարեւորութեան ծառայութիւն մատուցեց և հայ թատրոնին: Արուեստագէտի գրական հակումները դրսեւորուեցին կինոյի ասպարէզում նոյնպէս: Նրա Ֆիլմերն աչքի ընկան դիպուկ երկխոսութիւններով և սահուն պարսկերէնով, այն դէպքում, երբ Պաշիկեանի մայրենին հայերէնն է¹¹:

Պաշիկեանի «Սառա»յով էլ, 1950ի Յունուարին «Ֆիրդուսի» թատրոնում, կայացաւ ԹԵԱԹի բացումը¹²: Երկու տարի անց՝ 1952 Մարտի 4ին, բեմադրութեան երկրորդ փառերակը՝ Ա. Աղամալեանի բեմադրութեամբ, ներկայացուեց արդէն սեփական յարկի տակ՝ Թեհրանի Դաւթեան Ազգային Դպրոցում, թատերասրահի հիմնաւոր վերանորոգումից և արդիականացումից յետոյ՝ արձանագրելով նաև խմբի «զգալի առաջադիմութիւն»¹³ այդ ընթացքում:

Եւ «Սառա»յում, և «Գորշ Վարագոյրներ» թատերախաղում, հեղինակին յուզող նոյն թեմայի տարբեր դրսեւորումներն են: Ժամանակակից հասարակարգը և դրա արատաւոր կողմերը, որոնք կարող են ծնել կեղծ պատկերացումներ բարու և չարի, բարոյականի և ոչ-բարոյականի մասին, հոգեբանական դրամաներ, որոնցում պայքարն ընթանում է ոչ այնքան հակադիր ուժերի միջև, որքան՝ մարդու իսկ ներաշխարհում: Հերոսները՝ դրական թէ բացասական, բոլորն էլ իրական կեանքից են. թմբամուլ հայրը «Գորշ Վարագոյրներ»ում, որը դտտեր յաջող ամուսնութեամբ, ձգտում է հասնել բարեկեցիկ կեանքի, անբարոյ վարքի տէր Մեհրին, որը, թաքնուելով հիւրանոցի գորշ վարագոյրների ետևում, ընդունակ է արատաւորելու զբարեստացած Ալիէէին և վերջապէս, ժամանակի հերոսը՝ մտաւորական Սիրուշը, մի մարդ, որը կարողանում է մերժել իրեն պարտադրուած բարոյական ըմբռումները¹⁴:

Դասական թատերագրութիւնից ծանօթ մի իրապիճակ, որն էլ թատերախմբի մէկ այլ բեմադրիչի՝ Վ. Աղամալեանին զրոյցը բեմադրելու Եիրվանդադէի Պատուի Համարը (1952): Հարցադրումները նոյնն են. հօր և դտտեր հակասութիւնները, հոգեւոր արժէքների և նիւթական շահի բախումները՝ իրենց արտաթրուումը գտնելով մի կողմից՝ Մարգարիտի և Արտաշէս Օթարեանի, միւս կողմից՝ էլիզաբեթեանների ընտանիքի անդամների վարքագծում: Տարբեր են միայն ներկայացուող միջավայրն ու ժամանակը: Այդ տարբերութիւնն էլ կլակէս դարձաւ բեմադրական լուծումների համար: Բեմադրիչը, վերաբառա-

րելով ԺԹ՝ դարավերջի հայ բուրժուական միջավայրի հաւաստի եւ ճշգրիտ պատկերը, ընդգծեց, որ հասարակութեան ցաւոտ եւ խոցելի կողմերը հիմնականում մնացել են նոյնը, ստանալով, թերեւս, աւելի սուր դրսեւորումներ:

Իբրեւ Մարգարիտի դերակատար հրաւիրելով խմբի երիտասարդ դերասանուհի Շուլցին, որն ընդամէնը մէկ ամիս առաջ փայլել էր Սառայի դերում, բեմադրիչը, Հերոսների արտաքին նմանութեամբ նոյնպէս ընդգծեց ստարեր ժամանակներ ներկայացնող, սակայն հասարակական նոյն դիրքորոշումն ունեցող նրանց ընդհանրութիւնը: Զգայուն խառնուածքի տէր, «յոռի բարքերի ամենդ գոն»¹⁵ Սառան նոյնքան տպաւորիչ էր, որքան «ժամակ խիղճ ու ազնուութիւն, հրեշտակատիպ Մարգարիտը»¹⁶: Շուլցը հաւասարապէս համոզիչ եւ ազդեցիկ լինելով երկու ներկայացումներում՝ դասուեց խմբի խոստմնալից դերասանների շարքին¹⁷: Սա մի յաջողութիւն էր, որը սկիզբ դրեց ԹԵԱԹԸ եւ իրանահայ թատրոնն ընդհանրապէս բնութագրող օրինակափութեան. ամէն մի բեմադրիչական նուաճում, իր հետ բերում էր նաեւ դերասանական յայտնութիւն՝ նկատելի հետք թողնելով համայնքի թատերական կեանքում:

Պատուի Համարից յետոյ, Շիրվանզադէի թատերագրութեանը դիմելու նոյն դրդապատճառներն ունէր նաեւ Բարոյեանը, որի բեմադրած Նամուսը ներկայացուեց 1953 Նոյեմբերի 20ին: Շիրվանզադէի այս դրամայի թաւրիգեան բեմադրութեան մէջ ինքը՝ բեմադրիչը, 1930ին խաղալով Սէյրանի դերը, սկիզբ էր դրել իր թատերական գործունէութեանը համայնքում¹⁸:

Սէյրանի դերն այս անգամ ստանձնեց Սուրէն Բաղդասարեանը (ծն. 1927), որն իր կերպարը ստեղծեց հաւաստի եւ զունեղ արտայայտամիջոցներով այդպէս էլ գնահատուելով մամուլում. «Նա լաւագոյնս ըմբռնել էր իր կերպարած տիպը, - գրեց Այլբի թղթակիցը, - որի զգացումները՝ մարմամբուր սիրոյ, խորունկ վշտի, արդար զայրոյթի եւ բոցավառ վրէժնեղութեան, արտայայտեց ամենայն հարազատութեամբ: Խելագար Սէյրանի իր բնական խաղը քիչ է յաջողութեամբ միայն հին սիրողներին, այլեւ դերասաններին»¹⁹:

Նոյնը կարելի է ասել նաեւ Բարխուդարի մասին՝ Վ. Ազամայեանի կատարմամբ: Մի կերպար, որը ժամանակին Թաշճեանի կողմից ստանալով բոլորովին նոր՝ ազամականական խաղը յիշեցնող մեկնաբանում, հիացրել է Գուրգէն Զանիրեկեանին²⁰:

Նշենք, որ 1950ականներին Շիրվանզադէի գործերը Հայաստանում նոյնպէս հաւասարապէս հետաքրքրեցին եւ կինոյի, եւ թատրոնի գործիչներին: Արտաշէս Հայ-Արտեանը 1956ին Հայֆիլմում բեմադրեց Պատուի Համարը. «Հայ դասական խաղացանկի սոցիալ-հոգեբանական ամենավառ դրամաներից մէկը՝ Ա. Շիրվանզադէի պիէսը, էկրանին հնչեց նոր ուժով, - գրուեց շարժապատկերի մասին: - Հ. Ներսիսեանի, Ա. Աւետիսեանի եւ միւս վարպետների ստեղծած կերպարները, դադարելով միայն բաւորոյն պատկանելուց, դարձան նաեւ կինեմատոգրաֆի սեփականութիւն»²¹: Մինչդեռ թատրոնը նոյնպէս, շարունակելով բեմադրել Շիրվանզադէի գործերը, գտնում էր դրանք մեկնաբանելու նոր ուղիներ՝ այդ նպատակով հրաւիրելով դերասանական խոստմնալից ուժեր: 1955ին Վարդան Աճէմեանը երիտասարդ ստեղծագործողների ստուգատեսի սահմաններում Սունդուկեանի Անուան թատրոնում բեմադրեց Նամուսը: Բեմադրիչը նիւթը ներկայացրեց նոյն՝ դասական գործը ժամանակակից տեսանկիւնով մատուցելու սկզբունքով, որը դարձաւ երիտա-

սարգ արուեստագէտների (Վլադիմիր Արաջեան, Մետաքսիա Սիմոնեան, Խորեն Արքաճամեան, Արմէն Խոստիկեան, Յովակ Գալոյեան, Գէորգ Չեփչեան) «ստեղծագործական նուաճում», «քատերական երիտասարդութեան յաջողութիւն»²², Սա թերեւս առաջին ներկայացումներից էր, որն ակնյայտօրէն հաստատեց, որ իրանահայ թատրոնը, ընթանալով խորհրդահայ թատրոնին համաքայլ ուղիով, ունէր նաեւ զարգացման համանման օրինաչափութիւններ, իր զարգացման շրջադարձային փուլերում չիման եզրեր գտնելով յատկապէս Վ. Աճէմեանի գեղագիտական ըմբռնումների հետ:

Այսպիսով, ԹԵԱԹ-ում բեմադրուած ինչպէս արդիական, այնպէս էլ դասական երկերը, հետապնդում էին միեւնոյն նպատակը. ներկայացնել հասարակարգի ճշգրիտ պատկերը:

Կնոջ կերպարը, իրրեւ անհատը հասարակութեան շողկապող մի օղակ, այս պարագայում ստացաւ առաջնային նշանակութիւն՝ դառնալով հիմնական գաղափարակիրն ու կենտրոնական դէմքերից մէկը՝ եւ դասակարգի, եւ ժամանակակից դրամաներում: ԹԵԱԹ-ում բեմադրուած միւս՝ Իւօ Վոյնոյիչի *Փոթորիկ*, *Ժենիա Արիստակեան-Պոլիակիւնայի Կարապի Երգը* եւ *Մարի-Մաշէն*, Իլիա Սուրգուչեւի *Աշնանային Զուլթակներ* եւ այլ գործերում, կինը դառնում է կատարուող գործողութիւնների առանցքային դէմք: Մի դէպքում, նա, ինչպէս *Փոթորիկ*ում, լինելով մարդկային ամենաբարձր յատկանիշների մարմնացում, յանուն իր զաւակի պատրաստ է տառապել, ընդունակ ամէն մի գոհողութեան: Մէկ այլ դէպքում, ինչպէս *Աշնանային Զուլթակներ*ում, ընդհակառակը՝ հերոսուհին, կանոնի քառուղիներում կանգնած մի կին, յանուն սեփական երջանկութեան, ընդունակ է զոհաբերել զստեր ապագան: Բազակեան գործեր յիշեցնող իրալիճակներ, որոնք, բեմադրականից բացի, առաջադրում են նաեւ զերասանական խաղի հաւաստի եւ նուրբ դրսեւորումներ:

Համայնքի անուանի արուեստագիտուհիներից Լ. Աթայեանը, երկու տասնամեակ շարունակ խաղալով ամենաբազմազան դերեր, ԹԵԱԹի բեմադրութիւններում կայացաւ իրրեւ ժամանակակից, իր ուրոյն դիմագիծն ունեցող արուեստագէտ: Նրա յաջողութիւնը կապուած է 1960 Յունուարի 22ին բեմադրուած Ալեքսանդր Բիւոնի *Տօզ-Մարի* պիէսի հետ, որն առանձնացաւ միւսներից՝ դառնալով նշանակալից իրադարձութիւն համայնքի թատերական կեանքում: Անգլիական այս դրաման յայտնի դիմանկարիչ Ջերալդի եւ նոյնքան յայտնի արուեստագէտ Ջէյնի՝ զգայուն եւ ազնիւ անձնաւորութիւնների սիրոյ պատմութիւնն է: Գործողութիւններից գրեթէ զուրկ եւ զերասաններից մեծ հմտութիւն պահանջող մի թատերգութիւն, որը ներկայացնում է զուտ հոգեբանական անցումներից, հերոսների բարդ փոխարարելութիւնները ներկայացնող իրալիճակներից կազմուած մի շղթայ Աթայեանը, դիմելով նուազագոյն արտայայտչամիջոցների, այս բեմադրութեան մէջ հասաւ ողբերգականին յարող ներգործութեան՝ «Լուրիսան մէջ իսկ գեղարուեստական մեծ քոյիքներով նա կարողացաւ մերկայացնել»²³ իր կերպարը:

Իր սիրոյ մէջ մերժուած եւ շարաղէտ մի դիպուածից կուրացած նկարչի կերպարը հոգեմտ եւ հասկանալի էր մէկ այլ նկարչի՝ Ջերալդի զերակատար Յարութիւն Միմասեանին (ծն. 1924): Աւելին, սեփական ապրումները, նոյնիսկ երաժշտութիւնից ստացած տպաւորութիւնը կտաւի վրայ վերարտադրելու խնդիրը նա արդէն իսկ լուծել էր իրրեւ նկարիչ՝ հասնելով այս ուղղութեամբ

տպաւորիչ արդիւնքների: Դոկտոր Մոսթաֆաւի բնութագրմամբ՝ «երազնե-
րի նկարիչը», որը գեղանկարչութեան սապարէզում փորձում էր վերարտադ-
րել մարդու ներաշխարհը՝ «ժողովան ապրումի մի բրբիռ»²⁴, նոյնպիսի յաջո-
ղութեամբ կարողացաւ ներկայացնել նաեւ բարդ ու հարուստ ներաշխարհ ու-
նեցող իր հերոսին:

Արդիւնքում ստացուեց մի ներկայացում, որը որպէս բեմադրիչ Ռ. Աթայ-
եանի, նկարիչ եւ գլխաւոր դերակատար Յ. Մինասեանի եւ գլխաւոր դերակա-
տարուհի Լ. Աթայեանի միասնական ստեղծագործական ձեռքբերում, դաս-
ուեց ԹԵԱԹԻ կարեւոր նուաճումների շարքը: «Առաջին անգամն է, - գրեց Ա-
լէքը, - որ Թեհրանում խաղացում է մի պիեսա, երբ հանդիսականները լուռ,
առանց որեւէ շարժումի հետեւում էին խաղին լարում ուշադրութեամբ, խա-
ղի անրող ընթացքին: [...] Արեւստագետ պրն. Մինասեանը, կոյրի իր դերում
գերազանցեց ինքն իրեն, նա ամբողջապէս ապրում էր այդ վիճակը: [...] Ե-
ղաւ մի ըռպէ, երբ սրահի հասարակութիւնը դադարել էր շնչելուց: Եթէ այդ ըռ-
պէին մէկը սպասարան մտնէր դուրսից, չպիտի կոտակէր, թէ հասարակութիւն
կայ սրահում, նա պիտի տեսնէր միայն բնքը եւ այնտեղ երկու դերակատար-
ներ՝ ամբողջապէս ձուլուած իրենց դերերին»²⁵:

Լինելով նաեւ ներկայացման բեմանկարիչը՝ Մինասեանը, խորապէս ու-
սումնասիրելով տրուած ժամանակաշրջանը, հերոսների բարքերն ու կենցաղը,
բեմադրութեան արտաքին նկարագիրը կազմակերպեց իրականին հասնող
ճշմարտացիութեամբ՝ ստեղծելով մի մթնոլորտ, որը նոյնպէս կը տրամադրէր
անգլիական ազնուականութեան շրջանում բեմացող իրավիճակի ընկալմանը:

Այսպիսով, Թատերախմբի ծրագրի հիմնադրովթը կարելի էր համարել
իրականացած, երբ արդիականը հաստատուում էր օրուայ չափանիշներով, ինչ-
պէս հայ, այնպէս էլ օտարազգի հեղինակների ժամանակակից եւ դասական
գործերի բեմադրութիւններով: Այսուհանդերձ, առաւելութիւնը տալով ազ-
գային Թատերագրութեանը՝ «օտարի բարքերը» ներկայացնող Դոն Ժուան,
Երկաթէ Մարդ, Մամոն Եւ Դալիյա, Երբոյ Հոյժս եւ այլ Թատերախաղերի
փոխարէն, ի պատասխան 30-40ականների մամուլի հարցադրումների²⁶, հիմ-
նականում բեմադրուեցին հայ դասականների գործեր:

Հայ Թատերագրութեան հաստատումով, ազգայինը հաստատուեց նաեւ
ճանօթ եւ ընդունուած բեմադրութիւնների վերականգնման ուղիով: Այս ա-
ռումով, եթէ Մաքան ճանապարհ հարթեց հոգեբանական եւ իրապաշտական
դրամաների բեմադրութիւնների համար, ապա Յովհաննէս Թումանեանի
«Գիւրոր»ի բեմականացումը սկիզբ դրեց աւանդական բեմադրութիւնների վե-
րականգնմանն ու նորովի մեկնաբանմանը՝ ստեղծագործական յայտնութիւն-
ների տեսակէտից կազմելով ոչ-պակաս կարեւոր եւ հետաքրքիր մի բնագաւառ
Թատերախմբի ընդհանուր աշխատանքի մէջ:

«Գիւրոր»ի առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1935 Մարտի 1ին, Թաւ-
րիզում՝ ԹԵԱԹԻ հիմնադիր-բեմադրիչ Մ. Յովհաննիսեանի, իսկ երկրորդը՝
1954 Մայիսի 2ին, Թեհրանում՝ Վ. Աղամալխանի բեմադրութեամբ, երկուսն էլ՝
համայնքի անուանի բանասէր Հայկ Աճէմեանի²⁷ բեմականացմամբ: Աճէմեանի
շնորհիւ բեմադրութիւնները հարստացան տեղին յաւելումներով՝ գեղեցիկ
տեսարաններով Թիֆլիսի կինոտրակայան կեանքից, պարային հատուածներով ու

երգերով, ինչպէս նաեւ լրացուցիչ կերպարներով: Երկու ներկայացումներն էլ բազմամարդ էին՝ 30-40 հոգու մասնակցութեամբ: Յովհաննիսեանը բեմադրութիւնն իրականացրեց բացարձակապէս Թարիղի «Հայկազեան-Թամարեան» ղապրոցի աշակերտների ուժերով, միակ մեծահասակ դերասան ունենալով՝ Համբոյի դերով՝ Արմենակ Ահարոնեանին: Բեմադրութիւնները լուծուեցին համանման կերպով՝ իրրեւ հիմք ընդունելով քաղաքի եւ զիւղի հակադրութեան սկզբունքը, այն տարբերութեամբ, որ Վ. Աղամայեանինը, արհեստավարժ տեսակէտից, ունեցաւ աւելի կատարեալ բեմանկարչական լուծումներ՝ ներգրաւելով նաեւ համայնքի լաւագոյն դերասանական ուժերին: Ինքը՝ բեմադրիչը, տպաւորիչ էր Տանուտէր Ոսկանի եւ Թամազայի զոյգ դերերում, Բաղդասարեանը՝ գիւղական ուսուցիչ Թաթուլի եւ Կինտօ Շահնազարի, Արդումանեանը՝ Կինտօ Պեպոյի, Ստեփանեանը՝ Շաքրոյի, Լ. Աթաջեանը՝ Դեղիի, Կ. Սիմոնեանը՝ Նատոյի եւ Գ. Ղարաբէկեանը՝ Բազազ Արտեմի դերերում:

Երկու բեմադրութիւններն էլ յուզիչ էին, անգամ ցնցող: Յովհաննիսեանի «Գիբոր»-ի՝ «քարիզախայ քատերական կեանքում մամը շունցող»²⁸ բեմադրութեան մասին յիշում էին տասնամեակներ անց՝ գնահատելով այն իրրեւ նշանակալից իրադարձութիւն բեմարուեստի ընդհանուր համակարգում:

Եւ, ինչպէս ամէն մի բեմադրական նուաճում, այս ներկայացումները նոյնպէս ունեցան իրենց դերասանական յայտնութիւնները:

«Գիբոր»-ի Թարիղեան բեմադրութեան յայտագրում է, որ առաջին անգամ նշուեց Չարեհ Տէր-Կարապետեանի (1921-1996) անունը: Ինքնատիպ եւ օժտուած մի արուեստագէտ, որը, հայրենադարձուելուց յետոյ, երկար տարիներ աշխատելով Երեւանի Պատանի Հանդիսատեսի Թատրոնում՝ կրթից եւ դաստիարակեց մանուկների մի քանի սերունդ: Մեծահասակ հանդիսատեսը նրան յիշում է նաեւ հեռուտաաթաղոնից, Թատերազէտ Վարսիկ Գրիգորեանի բնորոշմամբ՝ «երամեկի երկուշաբթիներին» ժամանակներից, երբ, Տէր-Կարապետեանը դիտողին գերում էր յատկապէս հայ դասականների գործերի բեմադրութիւններում կերտած իր դերերով:

«Գիբոր»-ի միւս յայտնութիւնը եղաւ Հ. Արմանը՝ Արամայի Յովսէփեանը (1921-1980), բազազ Արտեմի դերակատարն առաջին եւ Համբոյիը՝ երկրորդ բեմադրութիւնում: Թեժիտարական արուեստի զարգացման խորքին այս օրինակով երեւում է առաջընթացը նաեւ դերասանական արուեստում: Առաջին ներկայացման սկզնակ, բազց հեռանկարային արուեստագէտը երկրորդում հանդէս եկաւ իրրեւ կազմաւորուած եւ փորձուած արուեստագէտ: «Մասիամերձ Գիբորի սմարի մօտ մենք տեսանք ոչ թէ երիտասարդ սիրող Հ. Արմանին, - գրում է Ալթըր,- այլ դժբախտ եւ որդեկորոյս հօր տիպը շատ քնակաւ կերպով եւ յուզակամօրէն կերպարող բեմական մի ուժի»²⁹:

Մի քանի տարի անց Արմանը դարձաւ ոչ միայն հայ համայնքի, այլեւ Իրանի փնտռուած դերասաններից մէկն ինչպէս Թատրոնում, այնպէս էլ՝ շարժանկարում: Նկարահանուելով Ս. Խաչիկեանի, Ա. Աղամայեանի, Արբի Յովհաննիսեանի եւ իրանցի բեմադրիչների Ֆիլմերում, կերտելով ամենաբազմազան՝ յանցաւոր աշխարհից սկսած մինչեւ խոնարհ գասի մարդկանց դերեր, նա դարձաւ երկրի առաջին մեծութեան կինօսատղերից մէկը, Սպահանի եւ Թեհրանի փառատօների մշտական մասնակիցն ու զափնեկիրը, որի «ամուրը միայն, կշիռ ու արժէք»³⁰ էր տալիս ցուցադրուող ժապաւէններին:

«Գիրքոր»ի օրինակով հասնելով յաջողութեան, վերականգնուեալ եւ բեմադրուեալ էին նաեւ պատմական ողբերգութիւններ՝ կիրառելով սկզբունքորէն նոր մօտեցումներ: Հայրենասիրական ոգով սողորուած, սակայն բեմադրական առումով խիստ խոցելի ներկայացումների փոխարէն ասպարէզ եկան ժամանակակից «կոստիւմալին» բեմադրութիւններ՝ կոթողային բեմագարգարանքներով, շքեղ զգեստաւորմամբ եւ զանգուածային տեսարաններով:

1954 Ապրիլի 25ին կայացած Ա. Աղամալեանի մեծածաւալ «Գէորգ Մարգպետունի» ներկայացումը (բեմականացում՝ Աշոտ Քաջուորեանի), իր տեսակի մէջ լինելով յայտնութիւն, հիմնովին փոխեց նաեւ հանդիսատեսի վերաբերմունքն այս կարգի գործերի նկատմամբ: Ա. Աղամալեանը, հեղինակային իր բեմադրութեան մէջ, ժամանակաշրջանը վերականգնելուց բացի, ստեղծեց նաեւ Մուրացանի վէպում նկարագրուած պատմական իրադարձութիւններին համապատասխան միջնորոտ. Դուինի բերդը, Գաւնոյ ամրոցը, Տրդատայ հովանոցը եւ Սեւանայ կղզին, որոնք Աշոտ Երկաթի՝ Բազրատունեաց արքայական տան թագաւորներից մէկի ժամանակները վերականգնելուց բացի, կոչուած էին նաեւ ընդգծելու կատարուող իրադարձութիւնների կարեւորութիւնը: Չանգուածային տեսարանների շուրջ 70 մասնակիցներն ունէին նոյն առաքելութիւնը: Հերոսների զգեստաւորումը, ստանալով առաջնային նշանակութիւն, կատարուեց յատուկ ուշադրութեամբ՝ Անուշաւան Գրիգորեանի ձեւաւորմամբ: «Թեւրանահայ բեմական կեանքում ոչ մէկ ներկայացման համար այսքան ճիգ եւ ջանք չի թափուել բեմայարդարման եւ զգեստաւորման ուղղութեամբ, - գրեց Այլքը՝ աւելացնելով, որ պատմական ողբերգութիւններից երես թեքած հանդիսատեսը, - ծարալի է նման ներկայացումների»³¹,

Այսպիսով, անցեալ դարի 50-80ականներին, ԹԵԱԹը, հիմնականում, կարողացաւ յաջողութեամբ լուծել համայնքի թատրոնում կուտակուած խնդիրները: Բեմական կեանքը վերականգնելուց բացի, հաստատուեց ստեղծագործական մի նոր համակարգ՝ հնից եւ աւանդականից պահպանելով եւ վերանայելով արժէքաւորն ու օգտակարը: Ստեղծուեց բարենպաստ մի կացութիւն, յետագայ՝ ամերիկեան արդիական թատրոնից եկող նորամուծութիւնների համար, որոնք, խմորուելով թատերախմբի ներսում, իրենց արտայայտութիւնը գտան «Արմէն» թատերախմբի ստեղծումով՝ Եւհէն Սարգսեանի, Արքի Յովհաննիսեանի, յետագայում նաեւ՝ Ա. Աղամալեանի բեմադրութիւններում:

Թեհրանում են գործել նաեւ այլ գաղթածախների մի շարք որոշ դերասաններ եւ բեմադրիչներ: Այդ թւում՝ նաեւ լիբանանահայ Օննիկ Գանթարճեանը, որը համախոհ-արուեստագէտների աջակցութեամբ, 1976ին, Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան համագործակցութեամբ, տեղի բեմական ուժերից կազմեց ՊԱԹՄ՝ «Պարոնեան Ազգային Ժողովրդական Թատերախումբ»ը³²: Խմբի առաջին խումբ՝ «Հայկական Հարսանիք» (1977) ներկայացումը՝ Արամաշոտ Պապայեանի «Աշխարհն, Այո՛, Եւու ի Եկել» կատակերգութեան աճէմեանական բեմադրութեան վերափոխուած տարբերակը, մեծ արձագանք գտաւ համայնքի մշակութային կեանքում: Սա, բեմադրական առումով, բոլորովին նոր խօսք էր տեղի թատերական կեանքում, Գանթարճեանի արուեստակիցների շրջանում առիթ տալով ազնիւ մրցակցութեան, իսկ մամուլում՝ բանավէճի եւ տարակարծիք հրապարակումների «Հայկական Հարսանիք»ի ներկայացումից յետոյ կատարուեց նոյնը, ինչը եղաւ 60ական-

ներին՝ Երեւանում, երբ, մէկը միւսին հետեւող աճէմեանական փայլուն բեմադրութիւնների համար տոմս ճարելը դիւրին խնդիր չէր՝ Թեհրանում, նրա սանի բեմադրած ներկայացումը նոյնպէս դարձաւ հանուրի ուշադրութեան առարկան։ Երեսները սպառուեցին անմիջապէս։ «Հայկական Հարսանիք»ի մասին խօսում էին ամէնուրեք՝ տանը, թէ դրսում, հիւսուում էին կատակներ, տպագրում հումորեսկներ։ Ժողովրդի խնդրանքով, ներկայացումը կրկնուեց մի քանի անգամ։ Նկատելի իրադարձութիւն լինելուց բացի, «Հայկական Հարսանիք»-ն ուղիներ հարթեց նաեւ հայ բեմարուեստի տարբեր հատուածների յետագայ մերձեցման համար՝ մէկ անգամ եւս հաստատելով, որ Աճէմեանը, նաեւ միջնորդուած կերպով, մասնակից էր համայնքի թատերական կեանքին։

Սփիւռքն ապրում է իր օրինաչափութիւններով, որոնց հիմքում ընկած են Հայ Դատի եւ Ապրիլեան Եղեռնի գիտակցութիւնն ու յիշողութիւնը։ Համապատասխանաբար 1965ին եւ 1975ին նշուեցին Մեծ Եղեռնի յիսնամեակն ու 60րդ տարիեցը։ Զկար մի հայագաղութ, որտեղ ապրիլեան զոհերի ոգեկոչումը չկերածուէր բազմամարդ ցոյցի։ Հայ ժողովրդի ողբերգութիւնը, որը նրա բեկորները ցրեց աշխարհով մէկ, տասնամեակներ անց, հաւաքական ոյժ ստացաւ։ Հասարակական կեանքում տիրող վերապրումի ոգին էր, որն իր արտայայտութիւնը գտաւ նաեւ արուեստի գործերում։ Սա արդէն ոչ թէ պարտուած, այլ պայքարի պատրաստ ժողովրդի կամքի արտայայտութիւնն էր։ Բողոքովին նոր տրամադրութիւններ էին համակել հայութեանը։ «Սփիւռքը այդ տարիներում, - մի առիթով գրեց Վահէ-Վահեանը, - զոգուած վերք էր տակաւին, չպաղած գայլոյթ, չյագեցած ոխ»³⁰։ Այս տրամադրութիւններն էլ, երաժշտութեան, գրականութեան եւ արուեստի միւս ասպարէզներէրց բացի, արտացոլուեցին նաեւ կինոյում։

Պայիկեանը, նախընտրելով Ֆիլմ-սարսափի ժանրը, իր զիրքորոշումը բացատրում էր ո՛չ իրբեւ ստեղծագործական նախասիրութիւն, այլ՝ աշխարհընկալման դրսեւորում, ի վերջոյ, սեփական ժողովրդի ճակատագիրը ներկայացնելու մի ճանապարհ։ Հարցազրոյցներից մէկում Պայիկեանն ասում է. «Ըմ հայրն Առաջին աշխարհամարտի հայկական ջարդերի վերապրողներից էր, որից եւ մանկուց լսել եմ կոտորածներին վերաբերող բազմաթիւ դրուագներ, արիւնաշաղախ մարդկանց շատ պատմութիւններ եւ իմ մէջ ցանկութիւն է առաջացել, ընդհանրապէս, ցոյց տալ մարդ արարածի գազանութիւնները մարդու հանդէպ...»³¹։

Նոյն տրամադրութիւններն ունէր մէկ այլ բեմադրիչ՝ Ա. Աղամալեանը, որը 1957ից թողնելով թատրոն, աշխատում էր կինոյում՝ դառնալով Իրանի շարժանկարի նշանաւոր ղեմաբերից մէկը։ Ապրելով օտար երկրում, Աղամալեանը, ինչպէս եւ Սփիւռքի բազմաթիւ այլ արուեստագէտներ, մնաց խորապէս ազգային՝ կարողանալով մէկ այլ ժողովրդի արուեստի միջոցով էլ արտայայտել սեփականին յուզող շատ հարցեր։

Նկարահանելով շուրջ տասը խաղարկային՝ «Մեր Թաղի Տղաները», «Մարդիկ», «Թափառաշրջիկ Աղջիկը», «Փեսայ Որոնողներ» եւ այլ շարժապատկերներ, Ա. Աղամալեանն ստեղծեց նաեւ Իրանի Ֆարս նահապետի գիւղացիների ինքնատիպ կեանքը եւ նրանց քաջարի պայքարը ներկայացնող «Գոլ Աղա» ժապաւէնը, որը պատտու բարձրացաւ 1968 Յունուարի 31ին, Իրանեան պատ-

մութեան այս դրուագն, իրականում, իր իսկ ժողովրդի անցելի վերարտադրելու մի փորձ էր: Ուշագրաւ է, որ մէկ այլ հայ արուեստագէտ՝ Արբի Յովհաննիսեանը, հասկանալով բեմադրիչի բուն նպատակը, գրում է. «Նխքը իրանեան է, այո: Սակայն ամբողջ աշխարհայեացքը, ամբողջ ճաշակն ու շնչատարումը հայկական է: Առարկայօրէն դիտուած ու նկարուած ամէն մի տեսարանում, կարող ես կարդալ ղեկավարի նպատակները:

Գեղջուկների, հալածանքի ու տեղահանութեան հատուածները, պայքարներն եւ այլն՝ իրենց շնչտով ու զոյութեամբ, քաւական չե՞ն յիշեցնելու, որ «ժայկականութեան» փորձեր է կատարուել...

Անուղղակի ձեւով չե՞ն պատկերում որոշ ազգային իրողութիւններ...»³⁵:

Անդրադառնալով Ֆիլմի գունային լուծումներին՝ Ա. Յովհաննիսեանը գրում է. «Գեղեցիկ ու հետաքրքիր է գոյների դասաւորումները, որ չափազանց արեւելեան է: Ընդհանուր առմամբ՝ գոյների համադրումը, «Սարեանային» է: Համադրուած են այնպիսի գոյներ, որոնք պիտի ստաժես, երբեք միասին գեղեցիկ չեն լինի: Ստացուածը, սակայն, ճիշտ հակառակն է. արդիւնքը՝ ճաշակաւոր է»³⁶:

Արուեստագէտն, ի վերջոյ, յանգում է բազմանշանակ մի հարցի, որին հետեւում է նոյնքան բազմանշանակ մի պատասխան. «Երբ ֆիլմն աւարտում է, ակամայից մտածում ես...

«Այս ֆիլմը իրանեան է»:

Պատասխանը հակասական է»³⁷:

Արբի Յովհաննիսեանը, կռահելով «ժայկականութեան» փորձը կինոյում, իրականում կռահեց նաեւ Ա. Աղաւաղեանի վերադարձը դէպի Թատրոն: Մի քայլ, որն Աղաւաղեանի համար պայմանաւորուեց ոչ միայն իրեն յուզող հարցերն ազգային արուեստի լեզուով արտայայտելու մտահոգութեամբ, այլեւ հայրենի Թատրեական կեանքում կատարուող իրադարձութիւններով:

1960ականների Հայաստանի բեմարուեստում, երբ ազգային արժէքները յաճախ փոխարինուում էին ապագային դադափարներով, նոյնպէս գտնուեցին ուղիներ՝ ժողովրդի ընդերքում հասունացող տրամադրութիւններն արտայայտելու համար: Դրա վառ ապացոյց է Սարոյեանի առաջարկով, Վ. Աճէմեանի «Իմ Սիրտը Լեռներում է» քնարական դրամայի բեմադրութիւնը 1961ին³⁸:

Պիէսը ներկայացնում է Քայիֆօրնիայում ապաստան գտած հայ ընտանիքի պատմութիւնը: Ռոբերտ Բրոնսի յայտնի բանաստեղծութեան առաջին տողն ընդունելով որպէս վերնագիր՝ Սարոյեանը գտաւ հայ ժողովրդի ուղեկիցը՝ դարձած մտքի մի նոր արտայայտութիւն. «Անարդ ուր էլ գտնուելիս լինի՝ նրա սիրտը մշտապէս մնում է հայրենիքում»³⁹: Միտք, որը Վ. Աճէմեանի բեմադրութեան մէջ հաստատուեց իբրեւ լէյտմոտիւ հնչած երգի խօսքերով՝ «Կռունկ ջան, կռունկ ջան, գարուն է...»: Ներկայացումն էլ, իբրեւ «տխուր ու մեկամաղձոտ» մի երգ, խաղացուեց մէկ արարով՝ առանց ընդմիջման՝ պատմելով «՞ու ու բարի մարդկանց մասին, որոնք չեն կարողանում գտնել իրենց կոչումն աշխարհում»⁴⁰:

Պատահական չէ, որ հայութեանը համակած այս միտքը, իր առաջին նշանակալից բեմական արտայայտութիւնն ստացաւ Սարոյեանի եւ Վ. Աճէմեանի շնորհիւ:

Գարրիէլ Սունդուկեանի Անուան Թատրոնի կեանքում, «Իմ Սիրտը Լեռներում է» ներկայացումը գնահատուեց իբրև «խոշոր նուաճում»⁴¹՝ ազդարարելով նաև «գարգացման նոր փուլ»⁴² խորհրդահայ բեմարուեստում:

Չարմանալի օրինակափութեամբ, Սարոյանի թատերախաղի ներկայացումն իրանում՝ Ա. Աղամալեանի բեմադրութեամբ, նոյնպիսի յաջողութիւն արձանագրելուց բացի, ազդակ հանդիսացաւ նաև իրանահայ բեմարուեստի վերընթաց գարգացման համար:

1970ականներին Ա. Աղամալեանը վերադարձաւ թատրոն՝ թեյադրուած նաև այստեղ կուտակուած լուրջ խնդիրների լուծման անհրաժեշտութեամբ: ԹԵԱԹԻ հանդէպ յառաջացած ոգեւորութիւնն աստիճանաբար մարելով, բացասաբար անդրադարձաւ նաև իմրի աշխատանքին, որն արդէն կանգնած էր լուծարման վտանգի առաջ: Համայնքի թատերական կեանքում հասունանում էր մի նոր ճգնաժամ:

Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան կենտրոնական վարչութեան հրահրով, Ա. Աղամալեանը, Մ. Յովհաննիսեանին նման, համախմբելով տեղի լաւագոյն՝ «հին ու նոր» ուժերը, կազմեց մի նոր թատերախումբ: Առաջին ներկայացման համար էլ ընտրուեց Սարոյանի «Իմ Սիրտը Լեռներում է» թատերախաղը⁴³:

Աճճմեանական բեմադրութիւնից շուրջ մէկուկէս տասնամեակ անց, 1974 Ապրիլի 4ին, ՀՄԱ կազմակերպութեան թատերախմբի ներկայացումով էլ «գրեթէ անլուրեան մատուցում» համայնքի բեմական կեանքը վերադարձաւ իր նախկին հունին: «Ուշացած գարունը թեւրանում,- գրեց թատերական գործիչ Անդրանիկ Սարեանը,- քերեց իր հետ նաեւ թատերական զարթօնը եւ վերածնունդն քարի ու դրական յոյսեր»⁴⁴: Թատերական զարթօնը անմիջականօրէն պայմանաւորելով հայրենիքից՝ արեւելքից եկող նոր գաղափարներով, Սարեանն աւելացնում է. «Բարեբախտաբար հասաւ ժամանակը, երբ եկանք հանդուելու, որ իրօք կարող է լոյսը ծագել արեւելքից»⁴⁵:

Նման արգիւնքի Ա. Աղամալեանը հասաւ՝ յենուելով ոչ միայն սեփական փորձի, դերասանական հարուստ ներուժի, այլև «Արարատ»ի թատերասարհի տեսնիկական լայն հնարաւորութիւնների վրայ:

Թատերախաղի վերջում Բէն Ալեքսանդրի ընտանիքն ստիպուած է լինում նորից բռնել թափառումի ճանապարհը: «Բեմը պտտում է, եւ մենք տեսնում ենք, թէ ինչպէս Չոնին, նրա հայրը եւ տատը լքում են արդէն ընտելացած վայրերը: Վեր քարձրացրած տախտակամածով, որը ներկայացնում է հրապարակ, նրանք քայլում են դանդաղ, կարծես թէ սարն են քարձրանում...»⁴⁶:

Երեւանեան բեմադրութեան այս նկարագրութիւնը հիմք է տալիս ենթադրելու, որ «Արարատ»ի շարժական բեմն Ա. Աղամալեանին նոյնպէս հնարաւորութիւն կ'ընձեռնէր բեմադրական նման լուծումների համար: Բեմի շնորհիւ կառուցուեցին նաև բոլոր կողմերից դիտուող, միաձոյլ բեմազարդարանքներ՝ ներկայացման ոգուն համապատասխան՝ պարզ ու տպաւորիչ: Բէն Ալեքսանդրի հիւղակը՝ ամերիկեան փոքրիկ մի շինութիւն, ստեղծում էր նաև ժամանակաւոր եւ ոչ-յուսալի կացարանի տպաւորութիւն:

«Իմ Սիրտը Լեռներում է» թատերախաղի բեմադրութեամբ իրանահայ թատրոնում ոչ միայն յաջեհարուեց եւս մի ճգնաժամ, այլև, կորցրածը վերականգնելով, ՀՄԱ կազմակերպութեան թատերախումբը կանգնեց Սփիւռքի

լաւագոյն խմբերի կողքին: Ներկայացման առիթով Սարեանն իր նոյն յօդուածում գրեց. «Հայաստանում կարող ենք ասել, որ շնորհի վաստակատու արուեստագետ Արամայիս Աղամալեանի ձեռնբեքութեան եւ «Արարատ» կազմակերպութեան Թատերախումբի, մենք եւս կանգնած եղանք առաջին զօր վրայ: Որ շնորհի այս գերազանցապէս յաջող ներկայացման, մենք շարք մտանք սփիւրքահայ առաջնակարգ խմբերի շարքում»⁴⁷:

Բեմադրական առումով լինելով եւս մի նուաճում, աւելին՝ իւրօրինակ հանրագումար, որին իրանահայ թատրոնը յանգեց շուրջ վեց տասնամեակ տեւող իր պատմութեան ընթացքում, «Իմ Սիրտը Լեռներում է» ներկայացումն իր հետ բերեց նաեւ դերասանական կարեւոր յայտնութիւն: Դա Սարգիս Գրիգորեանն էր (1956-1986)՝ պատանի Ջոնիի դերակատարը կերպար, որը զլիսաւոր հերոսի՝ Ջասպէր Մըք Գրեգորի հետ կազմելով մի ամբողջութիւն, դառնում է կեանքի անընդհատութեան եւ ներդաշնակութեան խորհրդանիշ: Մի կողմից՝ իր ճանապարհն անցած եւ շեքսպիրեան դերերով իմաստանցած Մըք Գրեգորը, իսկ միւս կողմից՝ այդ նոյն ճանապարհի չէմփն կանգնած Ջոնին: Երկուսն էլ հաւասարապէս անզօր ու անօգնական՝ չեն հասկանում եւ չեն կարողանում համակերպուել աշխարհի անարդարութիւններին ու անկատարութեանը:

Հայաստանցի հանդիսատեսը լիջում է Ջոնի-Վարդուհի Վարդերեսեանի «եզրափակիչ, կրքոտ ու դառնութեամբ լի խօսքերը, «Դու գիտես, պապա, ես ոչ մէկին չեմ մեղադրում, բայց ինչ-որ տեղ մի բան սխալ է»⁴⁸:

Ս. Գրիգորեանի Ջոնին, թերեւս, աւելի խոսուն է ու մտածկոտ, «չի մեղադրում», սակայն նրա խելացի եւ խիստ հայեացքը լի է մեղադրանքով՝ շեշտելով, որ աշխարհի դառնութիւններն արդէն ճաշակած պատանին, փորձում է նաեւ գտնել դրանց բացատրութիւնը: Աւելին, Համլէտ Բարսեանի Մըք Գրեգորի նկատմամբ ունենալով որոշակի առաւելութիւն, Ս. Գրիգորեանի Ջոնին դարձաւ ներկայացման «տիրակալ դէմքը», ըստ Սարեանի՝ մեծագոյն, «այլեւ շնորհաշատ դերակատարը սոյն ողբերգութեան»⁴⁹:

Անուանի գեղանկարիչ Մարկոս Գրիգորեանի Հոռոմում ծնուած իրօք շնորհաշատ դուստրը կարող էր շարունակել փայլուն սկիզբ ունեցող եւ նոյնքան փայլուն ապագայ խոստացող դերասանական իր ուղին: Սակայն, արուեստագիտունու տրուած կեանքի ժամանակը չափազանց կարճ էր՝ 29 տարի: Եւ այդ ընդհատուած կեանքի ընթացքում անգամ Ս. Գրիգորեանը հասցրեց անջնջելի հետք թողնել իրանահայ թատերական կեանքում: «Թեմի վրայ մաքացարձակ մագնիսական ոյժ»⁵⁰ ունէր եւ զարմացնում էր իր ունակութիւնների բազմազանութեամբ: Աւարտելով Եւրոպայի լաւագոյն թատերական հաստատութիւններից մէկը՝ Լոնդոնի Գրիլզոլ Երաժշտական Եւ Դրամատիկական Դպրոցը, Ս. Գրիգորեանը հիմնականում խաղացել է ամերիկեան դրամատուրգների գործերի բեմադրութիւններում, իսկ Եւրոպայիցի «Մեղէն»-ում, ի յայտ բերեց «ողբերգակ դերասանուհու անվիճելի տաղանդ»⁵¹:

Եթէ Սարոյանն «Իմ Սիրտը Լեռներում է» թատերախաղով ներկայացնում է ժողովրդի վիճակը բռնազաղթից անմիջապէս յետոյ, ապա մէկ այլ հեղինակ՝ Մուշեղ Իշխանը, իր երկերում արտայայտում է այն միտքը, որ եզեռնը վերապրելուց յետոյ անգամ, հայ ժողովուրդը զեռեւս կանգնած է բարդ ու կարեւոր խնդիրներ լուծելու անհրաժեշտութեան առջեւ:

Տրոհուած հայրենիքի շլուծուած խնդիրները, «սիլիոքսահայոթեան գոյատեման տագնապը»⁵⁴ անցած արհաւիրքից սթափուելուց յետոյ, դարձան 1970ականների թատրոնի կենտրոնական թեմաներից մէկը: Աղամայեանը, որպէս արդէն արժարձուած նիւթի շարունակութիւն, «Իմ Սիրտը Լեռներում է» դրամայից յետոյ, բեմադրեց Մ. Իշխանի «Մեռնիլը Որքան Դժուար է» թատերախաղը: Այս դրամայի հիմքում դարձեալ հայի ճակատագիրն է, նրա տուներ եւ տուներգծի ճանապարհը, որը, ուրիշի երկրում հաստատուելուց յետոյ անգամ, պէտք է մտածել «իբ գոյամարտի, ի՞ր վիճակի մասին»⁵⁵:

Ներկայացումը տեղի ունեցաւ 1975 Մայիսի 17ին՝ Մեծ Եղեռնի 60րդ տարելիցին, նշանաւորելով նաեւ Աղամայեանի 40ամեայ ստեղծագործական ուղին:

Տասնամեակներ անց «Մեռնիլը Որքան Դժուար է» ներկայացումը Հայաստանում ծագած արցասխան պահանջատրեական շարժման հետ միասին, տարածուեց նաեւ հայրենիքում: 1989 Մայիսի 27ին, Երեւանի նորաստեղծ՝ «Նորք» Երիտասարդական թատրոն-Ստուդիան, ներկայացրեց գրողի «Կիլիկիոյ Արքան» պատմական դրաման՝ Արտաշէս Յովհաննիսեանի բեմադրութեամբ: Ներկայացում, որն այդ օրերի հասարակական տրամադրութիւններն արտայայտելուց բացի, «Նորք»ը բնութագրեց իբրեւ ազգային նկարագիր ունեցող եւ հեռանկարային մշակութային օջախ:

Խիստ արդիական հնչեղութիւն ստացած այս դրաման բեմադրիչը բեմադրեց ժամանակակից, արդիական ոճով: Ներկայացմանն ամբողջութեամբ հաղորդելով գուսպ եւ հակիրճ նկարագիր, Աղամայեանը, իբրեւ բեմանկարիչ, ոչ միայն հեռացաւ, այլ նոյնիսկ հակադրուեց հեղինակային նշումներին: Երկնային թագաւորութեան գեղատեսիլ դղեակի, սաղարթախիտ ծառասանի, դրախտի երկփեղկանի դարպասի, կապտաւուն եւ երազային լոյսի⁵⁶ փոխարէն՝ դէպի սովորական դուռը տանող սպիտակ մի արահետ՝ մուգ, սեւին տուող խորքին: Հերոսների զգեստաւորումը նոյնպէս պարզ է ու ժամանակակից, եւ, հակադրուելով բեմի սեւ խորքին՝ հիմնականում սպիտակ: Հակադրութեան հասցումը գոյների բախում, որը շեշտուած է լուսային հնարքներով: Ոչ մի աւելորդ կամ կողմնակի առարկայ, որը կարող էր շեղել հանդիսատեսի ուշադրութիւնը:

Հեղինակի պատկերացումներից այսքան հեռացած բեմայարդարումն, իրականում, աւելի քան համահունչ էր թատերախաղի հիմնական գաղափարին: Հայի համար դէպի դրախտ տանող ճանապարհը, անհնարինի աստիճան դժուար է երկնքում, ճիշտ այնպէս, ինչպէս տուներգծին՝ երկրի վրայ: Եւ, ինչպէս վերադարձը երկնքից, այնպէս էլ նահանջը տուներգծի ճանապարհից, հաւասարապէս անհնար է:

Այս մթնոլորտում է, որ, ինչպէս դատովճիտ, լսում է Պետրոս առաքեալի խօսքը՝ ուղղուած Ջէյմս Արամեանին. «Պիտի քափառիս երկրի եւ երկինքի միջեւ, անջրպետի ճամբաներուն վրայ, մինչեւ որ ողջ մնացած կոտորակդ աշխարհէն գայ, քեզի միանայ: Պէտք է ամբողջամաս, հասկաց՞ո՞ւր, իմնա թերի ես եւ անընդունելի»⁵⁷:

Ենթախորքը նոյնն է. հայը երկրի վրայ կը մնայ թափառական, իսկ նրա հողին երկնքում էլ տեղ չի գտնի, քանի զեռ չի ամբողջացել նրա հայրենիքը՝ կտրուած կտորակը չի միացել մնացած հատուածին: Այլընտրանք չկայ: Եւ, իբրեւ այս մտքի մէկ այլ հաստատում, հայ տնտեսագէտի ուղեղով մտածող

ամերիկացի Ջոն Հեյլըն ասում է. «աշխարհիս տագնապները չեն լուծուիլ, եթե փոքր ազգերու դատին լուծում չգտնուի: Եւ ամենն ասա՛՛ր հայ ժողովորդի արդար դատին»⁵⁸: *Խօսքեր, որ պէտք է գրոշմուէին հանդիսատեսի գիտակցութեան մէջ, ընդգծուեցին փաստագրական շարժանկարային տեսարանների ցուցադրումով եւ երաժշտութեան ուղեկցութեամբ (ցուցադրումը՝ Հանրի Եղանեանի, ձեւաւորումը Լիդա Բէրբէրեանի):*

Համայնքի թատերական կեանքում եւս մէկ նշանակալից իրադարձութիւն լինելուց բացի, «Մեռնիլը Որքա՛ն Դժուար է» ներկայացումը դարձաւ նաեւ դերասանական երեք սերունդների համագործակցութեան փայլուն օրինակ: Պետրոս առաքեալի դերակատար Մարութեանի՝ իրանահայ թատրոնի ակունքներում կանգնած թատերական գործչի կողքին, կանգնած է Բաղդասարեանը՝ Ջէյմս Արամեանի դերակատարը, ԹԵԱԹում սկսած միջին սերնդի աչիք ընկնող իսկ դերասաններից մէկը: Երիտասարդներից Ասիա Ալեքսանդրեանի իր առաջին իսկ նշանակալից՝ Անիտայի դերում, ցուցաբերեց «խոստանդանից մի խաղարկութիւն», որը «մի նոր գիտ հանդիսացաւ»⁵⁹ իրանահայ բեմական կեանքում: Տպաւորիչ է եղել նաեւ Ջոն Հեյլրի դերակատար Աշոտ Ստեփանեանը, որն «անքերի էր, բնական, հաղորդ ու մանուաւնդ ապրումով յորդ խաղարկութիւն ունեցաւ»⁶⁰: Գլխաւոր դերակատարների կողքին Մինասեանը (Բժիշկ Հարիսոն), Գէորգ Նուբարեանը (Բժիշկ Շեփրթթ), Քարամեանը (Բժիշկ Դէյփա), Արդա Փիլզազեանը (Օր. Մերի), Մատթէոս Շաֆրագեանը (Գարրիէլ հրեշտակապետ), Արմէն Մկրտումեանը (Մայք Աղամ), Կատարինէ Առաքեանը (Տիկ. Հէլլըր), Գառնիկ Պողոսեանը (Սամ), Սուրէն Մնացականեանը (Ուսուցիչ), կազմելով մի ամբողջութիւն, հաստատեցին, որ նորն իրանահայ թատրոնում իր ճանապարհը հարթում է եղածը պահպանելու, աւագ եւ երիտասարդ սերունդների համագործակցութեան սկզբունքով:

Մի քանի տարի անց, իրանահայ բեմադրիչ եւ դերասան Տիգրան Գրիգորեանը⁶², Աղամալեանի ուսանողը, հաստատուելով Հայաստանում, Երեւանի Պատանի Հանդիսատեսի Թատրոնում բեմադրեց Մ. Իշխանի «Մեռնիլը Որքա՛ն Դժուար է» թատերախաղը (1992): Սա հեռաւոր 70ականների իրանահայ թատրոնի արձագանգն էր հայրենիքում: Ուրեմն, ժողովրդի երկու հատուածները մերձենում էին նաեւ թատրոնի միջոցով, որը դարձաւ 70ականներին՝ Սփիւռքում, իսկ 90ականներին՝ Հայաստանում հայութեանը համակած միևնոյն՝ հոգեւոր վերելքի եւ հայրենասիրական գաղափարների արտայայտիչ: Այսպիսով, ինչպէս վարդան Աճեմեանի սան Գանձմարտեանը, այնպէս էլ Աղամալեանի սան Տ. Գրիգորեանը, կարողացան ճիշտ ժամանակին եւ արժանիորէն ներկայացնել իրենց ուսուցիչներից ստացած դասերն արտաշխարհում եւ հայրենիքում: Սա մի ձեռքբերում էր, որն ամբաստանուեց մէկ տարի անց՝ 1993 Հոկտեմբերի 18ին, երբ Մուշեղ Իշխանի «Մեռնիլը Որքա՛ն Դժուար է» թատերախաղը ներկայացուեց Երեւանի Գարրիէլ Սունդուկեանի Անուան Թատրոնում՝ Խորէն Աբրահամեանի բեմադրութեամբ՝ ստանալով համահայաստանեան հնչելութիւն:

Այս ընթացքի հաստատումներից մէկը եղաւ նաեւ պատմական նոյն իրադարձութիւնները վերարտադրող եւ բեմական նոյն ճակատադիրն ունեցող մէկ այլ գործի՝ Պերճ Ջէյթունցեանի «Ոտքի, Դատարանն է Գալիտ» թատերախաղի բեմադրութիւնը, որը Սփիւռքում՝ ԱՄՆի, Կանադայի եւ Սիրիայի հայ

զաղթօջախներում ներկայացուելուց բացի, 1983ին ներկայացուեց նաև Իրանում:

Պիէսը, անդրադառնալով Սողոմոն Թեհլերեանի դատավարութեանը՝ Հայ Դատի արդարացի լուծման մի յոյս կամ խորհրդանիշ, համարեց Ազամալխանին հետաքրքրող թեման վերլուծող ներկայացումների շարքը: Մի քանի տարի անց, 1988 Փետրուարի 16ին, Ջէյթունեցեանի դրաման ներկայացուեց նաև Երևանում՝ Գարրիէլ Մուսղուկեանի Անուան թատրոնում՝ Տիգրան Գապարեանի բեմադրութեամբ: Դուրս գալով մշակութային իրադարձութեան սահմաններից եւ միաձուլուելով ժողովրդական յոյզերին, ներկայացումը դարձաւ ազգային ինքնազգիտակցութեան նոր դրսեւորում:

Եւս մի օրինակ, որը թոյլ է տալիս բնութագրելու 1940ականներից Սփիւռքի թատերական կեանքում սկսած գործընթացի պատկերը:

Ի. դարի 40-50ականներին, ԹԵԱԹը բեմարուեստում կատարուող նորարարական բարեփոխումներն ընդունելով իրրեւ հիմք, իրանահայ թատրոնն առաջնորդեց համաշխարհային բեմարուեստին համաքայլ ուղիով: 1970ականներին, համայնքի թատերական դիմագիծը կտրուկ կերպով փոխուեց, որը հիմնականում պատճառաբանուեց զբոսից եկող՝ ինչպէս միջազգային, այնպէս էլ՝ համայնքի հասարակական կեանքում կատարուող իրադարձութիւններով: Յաղթանակարելով համայնքի բեմարուեստում կուտակուած լուրջ խնդիրներ՝ Իրանի Հայ թատրոնն այդ տարիներին դարձաւ ազգային զազափարների արտայայտիչը:

Իրանահայ թատրոնը, իրրեւ արեւելահայի իրապաշտական ոճի հետեւորդ եւ կրող, Ի. դարի ր. կէսին հասաւ զարգացման մի մակարդակի, հաստատելով իր արժանի տեղն ու դերը Սփիւռքում:

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Ա. Մահտեսեան, «Հայ Բեմը», Այբբ, 13-02-1952:

² Լրագրող, «Մտահոգութիւններ...», Այբբ, 20-05-1934 (ընդգծումները հեղինակինն են - Ա.Ձ.):

³ Ժ. Ղ., «Տեսակցութիւն Արարատ» Թատերախմբի Դերակատարների Եւ Պատասխանատուների Հետ», Այբբ, 2-06-1974:

⁴ Մուշեղ, «Ջրոյցներ Թատերական Արուեստի Մասին- Երկու Խօսք Իրրեւ Նախարան», Այբբ, 24-09-1951:

⁵ Արսէն Մամեան, «Եւլումներ Թարիղի, Թեհրանի Եւ Նոր Զուգայի Թատերական կեանքի Մասին», Այբբ, 18-11-1976:

⁶ Ն. Մ., «Գորշ «Վարդազոյրներ», Այբբ, 13-02-1953: նաև՝ Թղթակից, «Մ. Խաչիկեանի «Շիրազի Աղջիկը» Ժապաւէնը», Այբբ, 1-08-1954:

⁷ Հ. Մինասեան, «Արամայիս Ազամալխան (Ռեժիսոր, Դեկորատոր-Նկարիչ)» 40ամեայ Յօրինանի Առթիւ», Այբբ, 15-05-1975:

⁸ Իրանահայ Վերջին 50-ամեայ Թատրոնի Վաստակաւորներ, կազմեց եւ խմբագրեց Ա. Մամեան, Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութիւն, Թեհրան, 1985, էջ 97:

⁹ Նոյն, էջ 96-97: նաև՝ «Վահան Ազամալխան», Այբբ, 4-11-1976:

¹⁰ Իրանահայ..., էջ 140-142:

¹¹ Վարանգ, «Վարի Վարպետը» Սամուէլ Խաչիկեանի («Մի Մարզ Հայելու Մէջ» Ժապաւէնի Առթիւով), Այբբ, 13-01-1994: Խաչիկեանի մասին մանրամասն տե՛ս՝ Արծուի

Բախտինեան, Հայերը Համաշխարհային կինոյում, Երևան, Գրականութեան և Արուեստի Քանգարանի Հրատ., 2004, էջ 527-530.

- ¹² Մուր-Ռաշ, «Արարատի Քատերաֆոնները Եւ «Մամուլ», Այլք, 30.09.1957, Մէկ այլ աղբիւրի համաձայն, Քատերաֆոնի բացումը տեղի է ունեցել 1951 Մարտին (Արմէնուհի, «Աւերակների Վրայ» Դրամայի Բեմադրութիւնը Պր. Վ. Աղամալեանի 45ամեայ Բեմական Գործ. Առթիւ», Այլք, 17.12.1952):
- ¹³ Մի Գեղասէր, «Թ. Ե. Ա. Թ. ն Եւ «Մառաշի Նոր Բեմադրութիւնը», Այլք, 21.03.1952:
- ¹⁴ «Գորշ Վարագոյրներ»ի ներկայացումը՝ Մամուլի Ռայիկեանի Բեմադրութեամբ (1953, 20 Փետրուար), զուրա զալով համայնքի շրջանակներից, զնահատուկց նաեւ Իրանի մշակութային կեանքում: Journal de Téhéran ֆրանսերէն օրաթերթում գրուեց, որ «Մամուլի Խայիկեանը զարգացրել է այս նիւրը մի հազուադէպ ճշտութեամբ՝ կատուելով շարժումներով լի տեսարաններ, այլի զարնող իրատեսութեամբ» (Շահէն Մարգեան, «Գորշ Վարագոյրներ», Այլք, 6.03.1953): Պատահական է, որ նման յաջողութիւնից յետոյ Բեմադրիչը ստեղծեց նաեւ «Գորշ Վարագոյրների շարժանկարային պարսկերէն տարբերակը՝ «Շիրագցի Աղշիկը» վերնագրով: Եարժասպտկերը պատահաւ բարձրացաւ 1954 Յունիսի Չին Եւ մէկուկէս ամիս շարունակ միժամանակ ցուցադրուելով Թեհրանի երկու առաջնակարգ «Դիանա» եւ «Մայակ» կինոթատրոնների ամառային եւ ձմեռային դահլիճներում, արժանացաւ աննախադէպ յաջողութեան: Այլքում այդ օրերին գրուեց. «Թ՛ նիւի զարգացման, քե՛ ֆիլմի պատրաստութեան տեխնիկայի, մաքրութեան, ձայնի յստակութեան եւ քե՛ դերակատարների կայտ բերած խաղարկութեան տեսակետից «Շիրագցի Աղշիկը» մինչ օրս ցուցադրուած իրանեան ֆիլմերի մէջ յառաջնորդի մէկը կարելի է համարել, եթէ յասենք յառաջընթացը» (Թղթակից, «Մ. Ռայիկեանի «Շիրագցի Աղշիկը» Ժապաւէնը», Այլք, 1.08.1954):
- ¹⁵ Մի Գեղասէր, «Թ. Ե. Ա. Թ. ն»:
- ¹⁶ Հանդիսական, «Պատուի Համար» (Դրամա 4 Գործողութեամբ, Հեղինակ՝ Շիրվան-զադէ), Այլք, 30.04.1952:
- ¹⁷ Էմիլիա Շուլցը ազգութեամբ գերմանուհի էր, ամուսնացել է Գրիգորեան ազգանունով հայի հետ: Մարգարիտից բացի թեհրանահայ բեմում նրա կատարած դերերն են՝ Մառա («Մառա»), Մահականոյ Քաղուհի («Գէորդ Մարգարիտուհի»), Սիրանոյ («Մարթա»), Լէյլի («Աւերակների Վրայ»), Եւգինէ («Եւգինէ»): Յետագայում տեղափոխուել է ԱՄՆ (Իրանահայ Վերջին 50-ամեայ Քատրոնի Վաստակատերներ, էջ 168):
- ¹⁸ Արսէն Մամեան, «Նշումներ Քալիֆի, Թեհրանի Եւ Նոր Զուգայի Քատերական կեանքի Մասին», Այլք, 20.11.1976:
- ¹⁹ Ա., «Նամուս», Այլք, 27.11.1953:
- ²⁰ Գուրգէն Զանիբեկեան, Իմ Աշխարհից (Յուշեր), Գիրք Առաջին, Ճանապարհ Դէպի Քատրոն, Երևան, Սովետական Գրող, 1977, էջ 244:
- ²¹ Armyanskie Filmy: Vsesoyuzny Kinofestival 1978 (հայկական շարժանկարներ. համաժողովինական կինոփառատոն, 1978), Երևան, Արմկինօպրոկտ, 1978, էջ 12:
- ²² Բարկէն Յարութիւնեան, Սովետահայ Քատրոնի Տարեգրութիւն, Գիրք 2, 1941-1960, Երևան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1960, էջ 571:
- ²³ Հանդիսասես, «Քատրոն», Այլք, 29.01.1960:
- ²⁴ Դուկո. Մոսթաֆաի, «Երազների Նկարիչը», Այլք, 21.08.1949:
- ²⁵ Հանդիսասես, «Քատրոն», Այլք, 26.01.1960:
- ²⁶ Լրագրող, «Մատուցութիւններ...», Այլք, 20.05.1934:
- ²⁷ Հակ Անէմեանը 1924-1927, իր հրատարակած «Մասիս» օրացոյցում, ինչպէս նաեւ Փարիզի Յառաջ օրաթերթի եւ Թեհրանի Նոր Կեանք շարաթաթերթի էջերում, հանդէս եկաւ «Հայ Մշակչի Օրը»՝ իրեն համազգային տօնակատարութիւն նշելու նախաձեռնութեամբ: Այլք օրաթերթի առաջարկով, Հայ Մշակչի Օրը նշանակուեց

- աշաներ՝ Հոկտեմբերի առաջին կէսին ընկնող Թարգմանչաց Տօնի օրը, որը քաղաքից Յառաջը՝ 1927ի իր խմբադրականով: 1927ից ի վեր, Սփյուռքի բազմաթիւ դպրոցօթարներում, «Հայ Մշակութի Օրը» նշում է սակէն տարի՝ դառնալով «Խամազգային եւ համահայկական Մեծ եւ նուիրական մի տօն» (Մասիս, «Հայկական կեանքը Թարսիկի Մէջ», *Յառաջ*, 27-11-1925. նաև՝ Մասիս, «Հայ կեանքը Թարսիկի Մէջ. Մտացուած Տօն Մը», *Յառաջ*, 8-12-1926. նաև՝ «Հայ Մշակութի Տօնի Շուքը», *Այբ*, 13-10-1946):
- ²⁸ Արսէն Մամեան, «Նշումներ Թարսիկի, Թեհրանի եւ Նոր Զուլայի Թատերական կեանքի Մասին», *Այբ*, 6-12-1976:
- ²⁹ Ա., «Գիրքորը», *Այբ*, 26-05-1954:
- ³⁰ Հ. Ս., «Հայերը Որպէս Հիմնաստիւն Իրանական Շարժապատկերի», *Այբ*, 16-05-1964:
- ³¹ Ա., «Ներկայացում Արամայիս Աղամայիանի Բենեֆիտին», *Այբ*, 12-05-1954:
- ³² Նրա մասին տե՛ս մեր յօդուածներում «Վարդան Աճէմեանի Բէլլուսթաւայ Ուսանողները (Հայեացք Գրւածրուց)», *Արուեստ եւ ժամանակ, Գրւածր*, 2008, Թ. 1-2, էջ 59-64. նաև՝ "Etalon Kachestva" (որակի չափանիշ), *Literaturnaya Armenia*, 2009, Թ. 1, էջ 148-157:
- ³³ Լեւոն Հախփերդեան, *Տաղանք եւ Բնաւորութիւն. Վարդան Աճէմեանը կեանքում եւ Արուեստում*, Երևան, Խորհրդային Գրող, 1989, էջ 135:
- ³⁴ Մէջբերումը տե՛ս՝ Մուշեղ Իշխան, *Երկեր*, Երևան, Նայիրի, 1990, էջ 7:
- ³⁵ Վարանդ, «Վասիկ Վարպետը»:
- ³⁶ Արբի, «Գոյ Աղա», *Այբ*, 8-02-1968:
- ³⁷ Նոյն:
- ³⁸ Նոյն:
- ³⁹ Բարկէն Յարութիւնեան, *Հայ Մովսէսական Թատրոն (1917-1977)*, Երևան, Սովետական Գրող, 1985, էջ 303:
- ⁴⁰ Նոյն:
- ⁴¹ Նոյն, էջ 304:
- ⁴² Նոյն, էջ 303:
- ⁴³ Նոյն, էջ 302:
- ⁴⁴ Ժ. Ղ., «Տեսակցութիւն «Արարատ» Թատերախմբի Դերակատարների եւ Պատասխանատուների Հետ», *Այբ*, 2-06-1974:
- ⁴⁵ Անդրանիկ Սարեան, «Իմ Սիրտը Լեռներում է», *Այբ*, 7-05-1974:
- ⁴⁶ Նոյն (ընդգծումը հեղինակինն է - Ա.Ձ.):
- ⁴⁷ Յարութիւնեան, *Հայ Մովսէսական Թատրոն*, էջ 305:
- ⁴⁸ Սարեան, «Իմ Սիրտը Լեռներում է»:
- ⁴⁹ Յարութիւնեան, *Հայ Մովսէսական Թատրոն*, էջ 305:
- ⁵⁰ Սարեան, «Իմ Սիրտը Լեռներում է»:
- ⁵¹ Ա. Գրիգորեանց (Արծուի Բաշինեան), «Նա Գեղեցիկ էր եւ Արատսովոր...», *Հայրենիքի Շալ*, 16-22-12-1993:
- ⁵² Սարգիս Գրիգորեանի մասին տե՛ս՝ Էդուարդ Բայասանեան, «Սարգիսեան Երևոյթ էր», *Անդրազգայր*, 1993, Յունիս, Թի. 8. նաև՝ Artsvi Bakhchinyan, "Stat' Znamenitoy Ona Ne Uspela" (նա չհասցրեց նշանաւոր դառնալ), *Respublika Armenia*, 9-02-1994. նաև՝ Գէորգ Արաջեան, *Սարգիսեան Գրիգորեան*, Երևան, Հայ էդիթ, 2004:
- ⁵³ Մուշեղ Իշխան, *Երկեր*, էջ 10:
- ⁵⁴ Ժ. Ղ., «Մ. Իշխանի «Մեռնիլը Որքան Դժուար է» Բեմադրութիւնը», *Այբ*, 1-06-1975:
- ⁵⁵ Մուշեղ Իշխան, *Երկեր*, էջ 407:
- ⁵⁶ Նոյն, էջ 431:
- ⁵⁷ Նոյն, էջ 419:
- ⁵⁸ Այբ, 1-06-1975:

⁶⁰ Նոյն

⁶² Տիգրան Գրիգորեանը (Տիգրիս), Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի հրատարակած 1990ին եկաւ հայրենիք՝ աշխատանքի անցնելով Հայաստանի Հանրային Ռադիօընկերութիւնում որպէս պարսկական բաժնի հաղորդավար եւ թարգմանիչ: Նոյն տարիներին նա մասնակցեց «Տաւարիչ» ֆիլմի նկարահանմանը, որը նաեւ հայ եւ իրանցի կինեմատոգրաֆիստների առաջին համատեղ աշխատանքն է՝ նկարահանուել է Հայաստանում, հայ եւ իրանցի դերասանների մասնակցութեամբ, բեմադրի Հեղինակն ու բեմադրիչն է Մեհդի Փախլովզադէն, օպերատորը՝ Ալբերտ Եւաուրեանը: Կինօնկարը ներկայացուել է Իրանի 1994ի «Փաջը» փառատօնին՝ բաւականաչափ հետաքրքրութիւն առաջացնելով երկրի շարժանկարի բնագաւառում (Կարինէ Աֆրիկեան, «Հայ-Իրանական Մշակութային Կապեր (Երկու Հարցա-զրոյց)», Հայաստանի Հանրապետութիւն, 26-12-1992. նաեւ՝ Այբ, 18.04-1994):

THE DEVELOPMENT OF IRANIAN-ARMENIAN THEATER DURING 1950-70, IN THE BROADER CONTEXT OF ARMENIAN THEATER

(Summary)

ANAHIT CHTYAN

By the mid-20th century immense changes in world theater forced a difficult choice on Iranian-Armenian theater. It had to either update and upgrade itself in order to survive or to disappear.

Fortunately the 1950s witnessed the growth of a number of theater devotees who brought the so-much-needed change to Iranian-Armenian theater.

Content-wise old Armenian plays were staged with new interpretations in tune with contemporary issues. Besides this, new playwrights authored plays which both touched on the social lifestyle of the community and highlighted its national aspirations. In a sense theater aimed at reflecting the real picture of the community, with an important role reserved for women characters. Moreover, the fact that the 60th anniversary of the Armenian Genocide was at the doorstep generated a strong feeling and a sense of national awareness which gave a further national twist to Iranian-Armenian theater.

A basic change took place in the profession as well. It is true that the plays were still directed by professional directors, yet professional stage decorators and designers were involved too.

These developments helped the growth of a number of new actors and subsequently served to revitalise the theater.

The author notes that these changes and developments were a reflection of the significant changes that the Diaspora and Armenia had undergone during this same period.